

Հաստատված է

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի

գիտական խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) հանդիսանում է համալսարանի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում, որի հիմնական նպատակն է նպաստել մասնաճյուղի վերաբերյալ տեղեկատվության տարածման և տարածաշրջանի ուսումնական հաստատությունների հետ կապի զարգացմանը, աշխատանքային շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների մրցունակության աճին, շրջանավարտների և մասնաճյուղի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, մասնաճյուղի առջև առաջադրված որակի ապահովման խնդիրների լուծմանը:

1.2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կենտրոնը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման, իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցում է մասնաճյուղի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, Տավուշի մարզպետարանի

կրթության և գիտության վարչության, ինչպես նաև ԵՊՀ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ (այդ թվում՝ հասարակական, միջազգային, առևտրայինն այլն)՝ սահմանված կարգի համաձայն:

1.4. Կենտրոնը կարող է ունենալ ԵՊՀ ԻՄ-ի խորհրդանշանով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ):

1.5. Կենտրոնի գործունեությունը ֆինասավորվում է մասնաճյուղի միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

1.6. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումը իրականացվում են ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի ներկայացմամբ՝ մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ:

2.Խնդիրներն ու գործառույթները

2.1. Կենտրոնի խնդիրներն են՝

2.1.1. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ մասնաճյուղում տարվող աշխատանքների համակարգումը, կազմակերպումն ու ամփոփումը,

2.1.2. մասնաճյուղի ուսանողների մոտ ուսումնառության հետ զուգահեռ աշխատանքային որոշակի փորձի ձևավորման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը,

2.1.3. մասնաճյուղի ուսանողների, շրջանավարտների և հնարավոր գործատուների միջև արդյունավետ կապի ապահովումը,

2.1.4. տեղական և հանրապետական աշխատաշուկաների զարգացման միտումների մասին տեղեկատվության ամփոփումը, ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացումը,

2.1.5. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և շրջանավարտների համար աշխատանք գտնելու և այլ հիմնահարցերի վերաբերյալ տարբեր տեսակի խորհրդատվությունների,

դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպումը, համապատասխան տեղեկատվության տարածումը,

2.1.6. շրջանավարտների և մասնաճյուղի միջև մշտական կապի հաստատումն ու համագործակցության ապահովումը, ինչպես նաև մասնաճյուղի առջև ծառայած խնդիրների լուծմանը շրջանավարտների ներգրավումը,

2.1.7. մասնաճյուղի և տարածաշրջանի ուսումնական հաստատությունների միջև ակտիվ կապի ձևավորումն ու զարգացումը,

2.2. Կենտրոնի գործառույթներն են՝

2.2.1. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն առնչվող ռազմավարական և կազմակերպչական հիմնախնդիրների բացահայտումն ու վերլուծությունը, համապատասխան ծրագրերի կազմումն ու ներկայացումը ԵՊՀ ԻՄ-ի տնօրինությանը, ինչպես նաև մասնակցությունը այդ ծրագրերի իրականացմանը,

2.2.2. սեմինարների, կլոր սեղանների, գիտաժողովների, նպատակային և լրացուցիչ պատրաստման ու վերապատրաստման դասընթացների, աշխատաշուկայում արդի պահանջների և աշխատանքի որոնման տեխնոլոգիաների ու հմտությունների, մասնագիտական կողմնորոշման և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական ու այլ միջոցառումների կազմակերպումը, համապատասխան դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցությունը,

2.2.3. պետական և մասնավոր սեկտորներում զբաղվածության խնդիրներով զբաղվող պետական և մասնավոր կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր հիմնադրամների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպումը,

2.2.4. շահառուներին տարբեր հայտարարությունների և մրցույթների մասին տեղեկատվության տրամադրումը, համապատասխան գրականության բազայի ստեղծումը և վարումը (այդ թվում՝ էլեկտրոնային գրադարանի), տեղեկատվական նյութերի տպագրությունը,

2.2.5. տեղեկատվական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ համապատասխան տվյալների հենքերի, էլեկտրոնային խմբերի և ինտերնետային այլ միջոցների կազմակերպումը,

2.2.6. շրջանավարտների որակի վերաբերյալ բոլոր շահառուների ցանկությունների և պահանջների հավաքումը, վերլուծությունը, համակարգումը և ուսումնական գործող ծրագրերի փոփոխությունների վերոբերյալ առաջարկությունների ներկայացումը մասնաճյուղի տնօրինությանը,

2.2.7. մասնագիտացման, պրակտիկայի, ստաժավորման, կամավոր աշխատանքի, վերապատրաստման և փորձի ձեռքբերման այլ ժամանակակից ձևերի ու միջոցների վերաբերյալ առաջարկությունների, ծրագրերի մշակումը և համապատասխան աշխատանքների իրականացումը,

2.2.8. տարբեր ցուցահանդեսների (մասնավորապես՝ «աշխատանքի տոնավաճառ», «կարիերայի օր» և այլն), գործատուների հետ հանդիպումների, կազմակերպությունների ներկայացումների (շնորհանդեսների), ձեռնարկություններ էքսկուրսիաների, փոխայցելությունների և այլ միջոցառումների կազմակերպումը,

2.2.9. հավանական գործատուների, տարբեր կազմակերպությունների հետ համաձայնագրերի և հուշագրերի կնքումը, դրանց իրականացման ապահովումը,

2.2.10. շրջանավարտների և ուսանողների շրջանում սոցիոլոգիական հարցումների և այլ ուսումնասիրությունների, աշխատանք առաջարկող պետական, մասնավոր, միջազգային և այլ կազմակերպությունների կողմից առաջնային համարվող պահանջների և դրանց զարգացման միտումների, աշխատաշուկայի զարգացման հեռանկարների, աշխատաշուկայում համալսարանականների պահանջի, ժամանակակից մասնագիտությունների և զբաղվածության հետ առնչվող այլ հիմնահարցերի վերաբերյալ ուսումնասիրությունների կազմակերպումը, մասնաճյուղի տնօրինությանը և գիտական խորհրդին համապատասխան զեկույցների և առաջարկությունների ներկայացումը,

2.2.11. ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների, ամբիոնների և այլ ստորաբաժանումների կողմից իրականացվող և կենտրոնի խնդիրներին առնչվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունը, ընդհանուր համակարգված մոտեցումների և ծրագրերի մշակումը,

2.2.12. Խորհրդատվությունների կազմակերպումը կարիերայի վերաբերյալ՝ մասնագիտական ոլորտի փոփոխության դեպքում, ինչպես նաև օգնություն կարիերայի զարգացման պլանի կազմման հարցում,

2.2.13. «ԵՊՀ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի», «ԵՊՀ-ի շրջանավարտների միավորում» ՀԿ-ի, Հայաստանի և արտերկրի այլ բուհերի նմանօրինակ տորաբաժանումների հետ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

2.2.14. շրջանավարտների և ուսանողների հանդիպումների ու կլոր սեղանների, շրջանավարտների մեծարման երեկոների, շրջանավարտների հավաքների կազմակերպումը, շրջանավարտների աջակցությամբ և հանգանակած միջոցներով նպատակային ծրագրերի իրականացումը, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ գործառույթների իրականացումը:

3. Կառուցվածքը և կառավարումը

3.1. Կենտրոնի աշխատանքների համակարգումը իրականացնում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը կամ նրա համապատասխան հրամանով համակարգման գործընթացը կարող է վերապահվել փոխտնօրենին:

3.2. Կենտրոնը ղեկավարում է կենտրոնի տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը՝ համակարգող փոխտնօրենի ներկայացմամբ: Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում է մասնաճյուղի տնօրենը:

3.3. Կենտրոնի կազմում ընդգրկված են շրջանավարտների հետ տարվող աշխատանքների, ուսանողների և շրջանավարտների կարիերայի զարգացման և կենտրոնի գործառույթներից բխող այլ խնդիրներով զբաղվող մասնագետներ, մասնավորապես՝

- շրջանավարտների հետ աշխատանքները համակարգող մասնագետ,
- կարիերայի զարգացման աշխատանքները համակարգող մասնագետ,
- տեղեկատվական նյութերի խմբագիր-թարգմանիչ:

3.4. Կենտրոնի տնօրենը՝

3.4.1. կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է կենտրոնի ընթացիկ գործունեությունը, համաձայն ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության 12-րդ հոդվածի՝ մասնակցում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրինության աշխատանքներին, տնօրինության և գիտական խորհրդի նիստերին հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով,

3.4.2. ապահովում է կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ հանձնարարականներ, ապահովում կենտրոնի և այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունները,

3.4.3. ստորագրում է կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատարում նշագրումներ, կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկույցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ գրություններ ու փաստաթղթեր,

3.4.4. կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենին կամ կենտրոնի գործունեությունը համակարգող փոխտնօրենին ներկայացնում է համապատասխան զեկույց և առաջարկություններ Կենտրոնի գործունեությանը առնչվող մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ,

3.4.5. ԵՊՀ ԻՄ-ի տնօրենին կամ Կենտրոնի գործունեությունը համակարգող փոխտնօրենին ներկայացնում է առաջարկություններ Կենտրոնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու և վերապատրաստելու վերաբերյալ,

3.4.6. ներկայացնում է առաջարկություն իր բացակայության ժամանակ իրեն փոխարինող մասնագետին տնօրենի պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ,

3.4.7. ներկայացնում է կենտրոնը արտաքին շփումներում, կենտրոնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նախապատրաստում և ստորագրում համապատասխան

համագործակցությանն առնչվող փաստաթղթեր՝ դրանց մասին պարբերաբար զեկուցելով և համաձայնեցնելով ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի (կենտրոնի գործունեությունը համակարգող փոխտնօրենի հետ),

3.4.8. կազմակերպում և հսկում է կենտրոնում տարվող գործավարությունը, ինչպես նաև կատարում կենտրոնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ,

3.4.9. պատասխանատվություն է կրում կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և կենտրոնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար: